

ԿԱՐԾԻՔ

Նաիրա Յուրայի Վահանյանի

«Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների

ինտոնավորումը ուսուցման գործընթացում» թեմայով

թեկնածուական ատենախոսության վերաբերյալ,

ներկայացված ժԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա

(երաժշտություն)» մասնագիտությամբ

մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի

հայցման համար

Մենք հաճախ ենք առիթներ ունենում հպարտանալու հայրենական կոմպոզիտորական դպրոցի նվաճումներով, հայկական կատարողական արվեստի բարձր մակարդակով, երաժշտագիտական հետազոտություններով, երաժշտական կոլեկտիվների ծավալած արդյունավետ համերգային գործունեությամբ:

Սակայն հանիրավի ոչ միշտ ենք նկատում, որ այդ ամենի հիմնաքարը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան է, որի դիմորդը ձևավորվում է ոչ թե ավագ դպրոցում, ինչպես մնացած դեպքերում է, այլ 6-7 տարեկան հասակում:

Որպես երաժշտագետ՝ խիստ կարևորում եմ մայրաքաղաքի երաժշտական դպրոցների գործունեությունը, քանի որ դրանք են դիմորդներով ապահովում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, որն էլ իր հերթին երաժիշտ-կատարողներով է ապահովում մեր հանրապետության երաժշտական բոլոր կոլեկտիվները:

Աշխարհի շատ քիչ երկրներ կարող են հպարտանալ մանկական երաժշտական դպրոցների նման ծավալուն ցանցի առկայությամբ, որի գործունեությունը մի կողմից՝ ապահովում է հանրապետության երաժշտական զարկերակի անխափան բաբախումը, մյուս կողմից՝ պատրաստում բարձրաճաշակ ու բժախնդիր ունկնդիր:

Հետևաբար՝ այն ամենը, ինչ առնչվում է մանկական և պատանեկան երաժշտական կրթություն իրականացնող երաժշտական դպրոցներին, որոնք ժառանգել ենք խորհրդային տարիներից, պետք է միայն ողջունել:

Եվ շատ կարևոր է, որպեսզի դեռևս աշակերտական նստարանից երեխան գիտակցի, որ իր վերջնական նպատակը պիտի լինի ոչ թե կոմպոզիտորի գրած տեքստը գրագետ ու անսխալ նվագելը, այլ՝ կատարելը: Պետք է գիտակցի, որ շատ կարևոր է մեկնաբանումը. չէ՞ որ յուրաքանչյուր ստեղծագործություն տարբեր կատարողներ մեկնաբանում են յուրովի, կատարողը պիտի կարողանա ներթափանցել կոմպոզիտորական մտքի խորքերը, տեսնել և նվագել նաև այն, ինչը գրված չէ նոտաներում, բայց տեսանելի է «տողամիջյան տարածություններում»: Եվ միանգամայն բնական է, որ միևնույն կատարողը միևնույն ստեղծագործությունն ամեն անգամ մեկնաբանում է յուրովի:

Հետևաբար՝ ուսուցման պրոցեսում չափազանց կարևոր է աշխատանքն ինտոնացիայի վրա, ինտոնավորման պրոբլեմը, որպեսզի դեռևս աշակերտական նստարանից երեխան ընթանա ճիշտ ճանապարհով:

Ակնհայտ է, թե ինչ կարևոր նշանակություն ունի դաշնամուրային-կատարողական ինտոնավորման պրոբլեմատիկան մանկավարժության պատմության մեջ: Բավական է նշել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավգուստա Մալինկովսկայայի գիտական ուսումնասիրությունները (այդ թվում՝ «Фортепианно-исполнительское интонирование» (1990) և «Искусство фортепианного интонирования» (2005) մենագրությունները, բազմաթիվ հոդվածներն ու զեկուցումները), որոնց հանրագումարը դարձավ «Фортепианное интонирование как музыкально-педагогическая и исполнительская проблема» թեմայով դոկտորական ատենախոսությունը (1995): Իսկ բոլորովին վերջերս՝ 2022-ին Մոսկվայում լույս տեսավ Մալինկովսկայայի «Искусство фортепианного интонирования» բուհական դասագիրքը:

Այլ խոսքով՝ երաժշտական կրթության մանկավարժությունը հույժ կարևոր ոլորտ է, որի հանդեպ աշխարհում առկա է մեծ հետաքրքրություն:

Այս առումով արդիական են համարում այսօր հրապարակային պաշտպանության ներկայացված՝ Նաիրա Յուրայի Վահանյանի «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ինտոնավորումը ուսուցման գործընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, որը երաժշտական մանկավարժության հիմնական հասկացություններից մեկի՝

երաժշտական ուսուցման հիմնախնդիրներին նվիրված լուրջ ուսումնասիրություն է, անհրաժեշտ քայլ ու կարևոր հանգրվան երաժշտական կրթության մանկավարժության ասպարեզում:

Նաիրա Վահանյանի ատենախոսությունը նվիրված է մանկական երաժշտական դպրոցներում ուսուցման գործընթացում հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ինտոնավորման պրոբլեմի ուսումնասիրությանը, ինչն իրականացվել է առաջին անգամ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և վերլուծված ստեղծագործություններից ընտրված նոտային օրինակներից բաղկացած հավելվածից:

Առաջին՝ «Դաշնամուրային կատարողական արվեստում երաժշտական տեքստի մեկնաբանման տեսական և մեթոդաբանական հիմքերը», գլխի առաջին ենթագլխում ատենախոսը, հենվելով ականավոր երաժշտագետներ Բորիս Ասաֆևի, Բոլեսլավ Յավորսկու, Լև Մազելի և Քրիստափոր Քուչնարյանի աշխատությունների վրա, բացահայտում է ինտոնացիայի՝ որպես երաժշտական ձևի կարևորագույն իմաստային օղակի նշանակությունը (էջ 10-24), իսկ երկրորդում՝ ներկայացնում ինտոնացիայի նշանակությունը երաժշտական համատեքստում (էջ 24-33):

Երկրորդ՝ «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային երաժշտության կատարողական վերլուծությունը», գլխի առաջին ենթագլուխը նվիրված է ուսուցման տարբեր փուլերում մեթոդական մշակումների առավել ընդհանուր բնութագրերին (էջ 34-42):

Երկրորդ՝ կենտրոնական և ծավալուն ենթագլխում Ստեփան Շաքարյանի, Արամ Խաչատրյանի, Տիգրան Մանսուրյանի, Գայանե Չերտարյանի, Գագիկ Հովունցի, Ղազարոս Սարյանի, Անոն Բաբաջանյանի և Ալեքսանդր Հարությունյանի՝ տարբեր ժանրերի ու բարդության, այդ թվում՝ նաև պոլիֆոնիկ, ստեղծագործությունների վերլուծության հիման վրա առաջարկվում են ուսուցման պրոցեսի ընթացքում ինտոնացիայի վրա աշխատանքի մեթոդի կիրառման կոնկրետ ցուցումներ (էջ 43-96):

Երրորդ՝ «Փորձարարական ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները», գլխի առաջին ենթագլխում ատենախոսը ձևակերպում է փորձարարական ուսուցման ընդհանուր բնութագիրը և ներկայացնում աշակերտների երաժշտական ընդունակությունների վերլուծությունը (էջ 97-130): Երկրորդ ենթագլխում ի մի են բերվել փորձարարական ուսուցման արդյունքները (էջ 130-133):

Եզրակացություններում հանրագումարի են բերվել ուսումնասիրության կարևոր արդյունքները:

Աշխատանքն ունի կուռ կառուցվածքը, որն առանձնանում է գեղեցիկ լեզվով, շարադրանքը համոզիչ է և տրամաբանական:

Ատենախոսության անվիճելի առավելություններից է արդի գիտական չափանիշներին համապատասխանող տերմինաբանական և գիտական ապարատը:

Այս ամենը վկայում է, որ Նաիրա Վահանյանն իր ատենախոսությանը մոտեցել է ամենայն լրջությամբ՝ դրսևորելով բարձր պրոֆեսիոնալիզմ, խոր գիտելիքներ, ջանասիրություն, նպատակաուղղվածություն և, որ պակաս կարևոր չէ՝ մեծ ոգևորություն: Նաիրա Վահանյանի ատենախոսությունն աչքի է ընկնում ուսումնասիրվող նյութի գերազանց իմացությամբ:

Ատենախոսության կարևոր արժանիքներից են համարում այն հանգամանքը, որ դրա հեղինակ Նաիրա Վահանյանը ոչ միայն շնորհալի դաշնակահար է, այլև հմուտ մանկավարժ: Նա վերջին 30 տարիների ընթացքում դասավանդում է Երևանի երաժշտական դպրոցներում, իսկ 2012-ից՝ արդեն տասը տարի, Երևանի Տիգրան Չուխաճյանի անվան երաժշտական դպրոցի տնօրենն է:

2021 թվականից ատենախոսը սեփական մեթոդիկայով կազմակերպել է և անցկացրել փորձարարական ուսուցում, որի արդյունքում պատրաստել է միջազգային և հանրապետական տարբեր մրցույթների բազմաթիվ դափնեկիրներ և պրոֆեսիոնալ երաժիշտներ, ովքեր իրենց կրթությունը հաջողությամբ շարունակել են բարձրագույն երաժշտական կրթօջախներում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Այդ մեթոդիկան Ն.Վահանյանը կիրառել է ինչպես Հայաստանի (Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոց, Վանաձորի N1 երաժշտական դպրոց, Եղվարդի Արվեստի դպրոց ևն), այնպես էլ արտասահմանյան

երկրների (Սիրիա՝ Դամասկոս, Իտալիա՝ Բառլետա ևն) երաժշտական կրթօջախներում, ինչպես նաև Մալթայի մայրաքաղաք Վալետայում անցկացվող Դաշնակահարների միջազգային մրցույթի ընթացքում հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ նվագող դաշնակահարների հետ ունեցած սեմինարների, վարպետության դասերի և կոնսուլտացիաների ընթացքում: Այլ խոսքով՝ Ն.Վահանյանի մեթոդիկան արդեն իր փորձաքննությունը բարեհաջող անցել է և սովել է դրական արդյունքները:

Ակնհայտ է ատենախոսություն գործնական նշանակությունը. ատենախոսի՝ տեսականորեն հիմնավորված և գործնականում բարեհաջող փորձարկված ինտոնավորման նոր մեթոդական համակարգը մի կողմից՝ կարող է կիրառվել երաժշտական և արվեստի դպրոցներում՝ հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ուսուցման պրոցեսում, մյուս կողմից՝ կարող է հուսալի հիմք դառնալ հայ կոմպոզիտորների՝ այլ երաժշտական գործիքների (ջութակ, թավջութակ, փողային նվագարաններ, ժողովրդական գործիքներ և այլն) համար գրված ստեղծագործությունների ինտոնավորման համապատասխան մեթոդական համակարգերի ստեղծման համար:

Անվարան կարող եմ արձանագրել, որ իր գիտական ընդգրկմամբ, ստացված գիտական արդյունքների հիմնավորվածությամբ և կատարողական ճշգրտությամբ Նաիրա Վահանյանի ատենախոսությունը որոշակի ու կարևոր քայլ է երաժշտական մանկավարժության ասպարեզում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց տպագիր հոդվածներում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Բարձր գնահատելով Նաիրա Վահանյանի կատարած աշխատանքը, այրուամենայնիվ, նկատեցինք տեխնիկական բնույթի որոշ վրիպումներ, որոնք, բնականաբար, չեն կարող նագրել ատենախոսության վերաբերյալ ընդհանուր առմամբ բարձր գնահատականի վրա:

Այսպես՝

- Որոշ հղումներ՝ այդ թվում էջ 3-ի տողատակում հղված Մինակի «Музыкально-информационное поле в эволюционных процессах искусства» թեմայով դոկտորական ատենախոսության սեղմագիրը, էջ

10-ի տողատակում հղված Երաժշտական հանրագիտարանային բառարանը, էջ 119-ի տողատակում հղված Կուրտի “Основы линейного контрапункта” աշխատությունը ցավալիորեն սպրդել են «Օգտագործված գրականության ցանկից»:

- Ատենախոսության տիտղոսաթերթում բացակայում է «Աբովյանի» ազգանունը, իսկ սեղմագրի էջ 3-ում հայ երաժշտագիտության և երաժշտական մանկավարժության ասպարեզում ինտոնավորման պրոբլեմին նվիրված աշխատությունների հեղինակների շարքում հայտնվել է Ա.Մալինկովսկայայի ազգանունը:

Կարծում ենք, որ Նաիրա Յուրայի Վահանյանի ատենախոսությունն անհրաժեշտ է հրատարակել որպես մենագրություն, ինչը կլրացնի երաժշտական մանկավարժության տարբեր խնդիրների ուսումնասիրությանը նվիրված գիտական հետազոտությունների սակավաթիվ շարքը և հուսալի հիմք կդառնա երաժշտական մյուս գործիքների համար հայ կոմպոզիտորների գրած մանկական ու պատանեկան ստեղծագործությունների ինտոնավորման բնագավառում նմանատիպ հետազոտությունների իրականացման համար:

Խորհուրդ կտանք ատենախոսին, որպեսզի նա հետագայում շարունակի իր գիտական պրպտումները՝ ուսումնասիրության ոլորտում ներառելով ինչպես հայ մյուս կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունները, այնպես էլ՝ ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների դաշնամուրային երաժշտությունը:

Եզրակացություն՝

Նաիրա Յուրայի Վահանյանի «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ինտոնավորումը ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսությունն իր գիտական բարձր մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսության հեղինակը միանգամայն արժանի է ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (երաժշտություն)» մասնագիտության գծով մանկավարժական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 020 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

**ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝**

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր Աննա Ասատրյանի ստորագրությունը վավերացնում եմ՝**

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար,

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Արարատ ԱՂԱՍՅԱՆ

7 նոյեմբերի 2022թ.

